

ՀՀ Ֆինանսների նախարար
Պարոն Դ. Սարգսյանին

Կրկնօրինակը՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահ
պարոն Գ.Խաչատրյանին

Ընկերության տնօրեն

(ա.ա.հ.)

(հասցե)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ Սահմանադրական դատարանը սույն թվականի ապրիլի 2-ին, քննության առնելով ՀՀ ԱԺ պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ գործով դիմումը, իր որոշման 1-5-րդ կետերով որոշել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 6-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Թեև, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.04.2014թ ՍԴՈ-1142 որոշման 7-րդ կետով՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 30.09.2014թ, սակայն **որոշման 6-րդ կետով՝** ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, համաձայն որի՝ այդ դրույթներով նախատեսված իրավակարգավորումները **չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում**, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:

ՍԴՈ-1142 որոշումը վերջնական է և **ուժի մեջ է մտել հրապարակման պահից:**

Որոշման եզրափակիչ մասի 6րդ կետի համաձայն՝ մարդու կամքին հակառակ չեն կարող նրա սեփականությունը հանդիսացող աշխատավարձից գանձումներ կատարվել, այն ուժի մեջ է մտել հրապարակման պահից (որոշման եզրափակիչ մասը՝ <http://concourt.am/>):

Առաջնորդվելով վերոնշյալ՝ մարդու (վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների) սեփականության իրավունքները գերակա դրսևորելու և սեփականության իրավունքների սահմանափակումները վարձու աշխատողների (անհատ ձեռնարկատերերի, նոտարների) կամային հայեցողությամբ որոշելու սահմանադրորեն ամրագրված իրավունքը, ինչպես նաև հիմք ընդունելով մեր ընկերության աշխատակիցների գրավոր դիմումները, խնդրում ենք մինչև 19.04.2014թ. էլեկտրոնային հաշվետվությունների թիվ 86. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐՎՈՒՄ՝ Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ձևում կատարել փոփոխություն՝ ապակատիվացնելով պարտադիր կուտակային վճարի հաշվարկման դաշտի ավտոմատ լրացումը՝ տալով հայեցողական լրացման հնարավորություն:

Կից ներկայացվում են ընկերության աշխատակիցների դիմումների պատճենները:

(Անուն ազգանուն/ ստորագրությունը)

« » ապրիլի 2014թ.